


ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՑ
ԲՕՐՕՆԲՕ, ՕՆԲ.
ԳԱՆԱՏԱ



PARISH COUNCIL OF
HOLY TRINITY ARMENIAN CHURCH
MAILING ADDRESS
EXECUTIVE OFFICE 103 YONGE STREET
TORONTO, ONT., CANADA

Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Ave., West, Toronto, Ont., Canada
Mailing Address: 103 Yonge St., Toronto 1, Ont.

7 Մարտ, 1964
Թորանթո,

Գերաշնորհ
Տ.Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկայի և Գանատայի Հայոց
Նիւ Եորք

Արքազան Հայր,
Ստորեւ Ձեզի կը ներկայացնեմ այն տեղեկագիրը զոր կարդացի Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովին, զոր տեղի ունեցաւ Կիրակի 1 Մարտ, 1964 կեսօրէն ետք ժամը 4.00ին, ի ներկայութեան Եկեղեցւոյ Տրտու անդամներուն և Հայ ժողովրդեան:


Տեղեկագիր Հոգեւոր Հովիւի 1963 տարւոյ շրջանին:

Սիրելի անդամներ,
1963 տարին եղաւ իրապէս զանազանակնկալներով լեցուն և սակայն արդիւնաւոր տարի մը, որու ապահով լրանալուն համար փառք կու տամ Աստուծոյ, և սիրով կ'ողջունեմ բոլորդ:

Ժամապաշտութիւն. — 'Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեան երթիցուք մեք; Սաղմոս ծիւ. 1: Անցնող տարուան ընթացքին ամէն Կիրակի ինչպէս նաև կարգ մը պարագաներուն կիրակիէ տարբեր օրերուն Ս. Պատարագ մատուցած ենք: Միայն տարւան ընթացքին վեց զանազան առիթներով Ս. Պատարագ չէ մատուցուած, և սակայն շանացած ենք որ միշտ Եկեղեցւոյս դռները բաց մնան այդ տեսակ պարագաներուն և ներկայ եղող դպիրներ իրենց յատուկ բարեպաշտութեամբ իրենց բաժնին երգեցողութիւնը կատարած են: Մեծ Պահոց շրջանին կատարած ենք հինգ կիրակի յաջորդաբար Արեւազալի ժամերգութիւն: Սոյն շրջանին շաբաթը մէկ երեկոյ յատկացուցած ենք Խաղաղական և Հանգստեան ժամերգութեանց, թէև ներկայ եղող հաւատացեալները սակաւաթիւ եղած են: Խաղաղական և Հանգստեան ժամերգութեանց ընթացքին հաւատացեալներու մասնակցութիւնը ապահովելու համար պատրաստել տուած ենք սոյն ժամերգութեանց հոգեւոր երգերու և Աղօթքներու առձեռն տետրակ մը: Առաջին անգամ ըլլալով Վարդավառի Տօնին յաւարտ Ս. Պատարագի բացօթեայ Անդաստան կատարած ենք և այդ առթիւ օրհնած ենք Նորակառոյց Արահիս հիմերը, հայցելով որ նա ըլլայ Տուն համայնքային և Կեդրոն ազգային և Վառարան Մշակոյթի ի վայելումն Թորանթոյի և Շրջակայիս Հայ Եկեղեցասէր ժողովրդեան: Որպէս այցելու Պատարագիչ և Զարոգիչ կրկին առիթներով Ս. Եկեղեցւոյս Խորանը պայծառացուցած է և վերջին օրհնաբեր այցելութեան Նորակառոյց Արահիս պաշտօնական բացու մը կատարած է Վիճակիս Բարեխնամ Առաջնորդ Գեր. Տ. Սիոն Արք. Մանուկեան: Խորձեալ որպէս այցելու քարոզիչ կրկին առիթներով Ս. Եկեղեցւոյս Բեմը պայծառացուցած են Էվրնսթոնի Ս. Ներսէս Ենորհալի Աստուածաբանական Վարժարանի հիմնադիր-Տեսուչ Գեր. Տ. Տիրան Արք. Ներսոյեան, ինչպէս նաև սոյն Վրժ. Ի Փոխ-Տեսուչ Բարեշնորհ Տիրացու Յովհաննէս Արկ. Գասպարեան:

Եկեղեցւոյս երէց և կրտսեր Դպրաց դասերը իրենց լաւագոյնը ըրած են Աստուածային Պաշտամունքին իրենց մասնակցութիւնը բերելու: Ցատկապէս յիշատակութեան արժանի են Մինաս Սէլեանի և Յեսուէ նահապետեանի ջանքերը Եկեղեցւոյս Դպրաց Դասերու վերակազմութեան և զանոնք պահելու տեսակէտէն, իրենց մատուցած ծառայութեանց համար: Վերջնոյս ծամայթա մեկնումին առթիւ ինչպէս նաև Կիրակօրեայ Վրժ. Ի ծրագրին լրիւ գործադրութիւնը ապահովելու համար,

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՑ
ԲՕՐՕՆԹՕ, ՕՏԲ.
ԳԱՆԱՏԱ



PARISH COUNCIL OF
HOLY TRINITY ARMENIAN CHURCH
MAILING ADDRESS
EXECUTIVE OFFICE 103 YONGE STREET
TORONTO, ONT., CANADA

112

Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Ave., West, Toronto, Ont., Canada
Mailing Address: 103 Yonge St., Toronto 1, Ont.

Ժամանակէ մը ի վեր կրտսերաց Դարաց Դասու անդամները չեն կրցած իրենց ծառայութիւնը ընծայաբերել, կը յուսանք որ ծնողներու փոխադարձ համաձայնութեամբ և Կիրակօրեայ Վրժ.ի ծրագրին համաձայն կարելի կ'ըլլայ դարձեալ ապահովել մեր զաւակներուն հրեշտականման երգեցողութիւնը կարող և փորձառու ղեկավարի մը առաջնորդութեամբ: Անցնող տարուան ընթացքին փորձերուն և խմբերգային ժամապատկաններու իրենց թանկագին մասնակցութիւնը պարբերաբար բերած են նաև երգեհոնահարներ՝ Տիկին Տալիթա Պերեճիկեան և Օրիորդ Զրիստինէ Սէմէրճեան:


Սարկաւազաց Դաս.— 'Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ', Սղմ. ԴԹ. 1: Տարուան սկիզբը Եկեղեցւոյ Սարկաւազաց Դասը կը բաղկանար հետեւեալներէն՝ Վարդան Վարդանեան, Արամ Անմահունի, և Պերժ Լուլէճեան, ասոնց կողքին Սարկաւազաց երգեցողութեան իրենց մասնակցութիւնը բերած են նաև Տիար Կարպիս Ճելիլ, Արա Անմահունի ինչպէս նաև Վահէ Սվաճեան և Արթօ Չպուրճեան իբրև երէց մոմակալներ: Ս. ծննդեան և Աստուածայայտնութեան ծրագրուցին, Վիճակիս Առաջնորդ Սրբազան Հայրը Դարութեան չորս աստիճան շնորհեց Դպիր ձեռնադրելով հետեւեալները.— Արամ Անմահունի, Պերժ Լուլէճեանը, Մինաս Սէլեանը, Հրանդ Սուլինին, և Վահէ Սվաճեանին, առաջին երեքին շնորհելով նաև Ուրար կրելու և Սուրբ Սեղանին սպասարկելու մասնաւոր արտօնութիւն: Տարուան ընթացքին ունեցած են անոնք կարգ մը փորձեր, ներդաշնակութիւն յառաջ բերելու համար Ս. Սեղանի սպասարկողներու միջեւ, ինչպէս նաև համակարգելու համար Սարկաւազներու երգեցողութիւնը, ոճի և արագութեան տեսակէտէն:

Բարեպաշտական Նուէրներ.— 'Պատարագ Աստուծոյ' հոգի խոնարհ... Սղմ. Ե. 18: Շնորհակալութեամբ և Օրհնութեամբ կ'արձանագրենք 1963 տարւոյ ընթացքին Ս. Եկեղեցւոյ տրուած հետեւեալ ներբարեպաշտական Նուէրները.—

- ա.— Զոյգ մը Հնդկական պղինձեայ ծաղկաման, Նուիրատու՝ Տէր և Տիկին Յարութիւն Մանուկեան:
- բ.— Զոյգ մը Աւետարանի ճերմակ բոնիչ, Նուիրատու՝ Տիկ. Ֆրանսուէի Նահապետեանի:
- գ.— Յայտարարութեանց փեղկ մը, Չեռագործ և Նուիրատու Տիար Յարութիւն Մանկոյեան:
- դ.— 50 օրինակ Տիրան Սրբազանի հրատարակած Հայերէն և Անգլիերէն Պատարագամտոյց գիրքէն, Եկեղեցւոյ մէջ հաւատացեալներու կողմէ գործածուելու համար: Նուիրատու՝ Տէր և Տիկին Գրիգոր Գասպարեան:
- ե.— Զոյգ մը Ընկոյզի փայտէ շինուած Դասի գրակալներ, Չեռագործ և Նուիրատու Եկեղեցասէր Պոլսահայէ մը:
- զ.— Ս. Հաղորդութեան Տապանակ, հայկական կաթուղիկէ ոմով, Չեռագործ և Նուիրատու Տիար Դանիէլ Գալայճեան:
- է.— Ս. Խորանի պղինձեայ մշտավառ Կանթեղ մը, Նուիրատու Տէր և Տիկին Սէմ Սիմոնեան Համիլթընէն:
- ը.— Ս. Սկիհի կարմիր ծածկոց, սաթէն տուշէս, Չեռագործ և Նուիրատու Տիկին Լուսի Քէօշկէրեան:

Ժխակատարութիւն.— 'Արասջիր ըստ պիտոյից Տաճարին Տեառն Աստուծոյ', Ա. Եզրաս Ը. 19: Կատարուած են 11 Մկրտութիւն և Դրոշմ, մէկը Օզվիլի Անգլիքըն Եկեղեցւոյ մէջ ձեռամբ Վազգէն Վրդ. Թաղոյեանի, 1 Դրոշմ, 4 Պսակաղրութիւն և 1 խոն Պսակաղրութիւն, և 2 Յուդարկաւորութիւն: Կատարուած են նաև մասնաւոր Գերեզման օրհնէք,

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ
ԲՕՐՕՆԲՕ, ՕՄԲ.
ԳԱՆԱՏԱ



PARISH COUNCIL OF
HOLY TRINITY ARMENIAN CHURCH
MAILING ADDRESS
EXECUTIVE OFFICE 103 YONGE STREET
TORONTO, ONT., CANADA

3

Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Ave., West, Toronto, Ont., Canada

Mailing Address: 103 Yonge St., Toronto, 1, Ont.

Եկեղեցւոյ մէջ Հոգեհոգեւորական արարողութիւններն ենք Գերեզմանատուն այցելութեամբ: Ս. ծննդեան և Ս. Զատիկի տօներուն առիթներով Տնօրինէքի այցելութիւններ տուած ենք: Կատարուած է նաև 1 Նշանօրինէքի արարողութիւն: Նիակարա-Ֆոլգի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ կատարած եմ 1 Յուդարկաւորութիւն, ինչպէս նաև Սէնթ Բէթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ 1 Մկրտութիւն և Դրոշմ:

Ծուխի սահմանները.—'Ո եղ զսահմանս քո ի խղաղութիւն...՝ Սղմ. ծնէ. 4: Երբեմնի փոքրաթիւ հայ գաղութը այսօր առաւել բազմապատկուած վիճակ մը ունի վերջին երկու տարիներու ընթացքին յատկապէս Եգիպտոսէն գալով աշխարհի այս երկրամասին Թորանթոյի մէջ հաստատուող հայորդիներով: Ուրախ ենք որ մեր սիրելի ազգակիցները ընտելանալով այս երկրին ընծեոած պայմաններուն, իրենց աշխատասիրութեան շնորհիւ հանգիստ և ապահով կեանք մը ապրելու հոգեկան գոհունակութիւնը ունին: Թիւի բազմապատկութեամբ բազմապատկուած է նաև մեր Եկեղեցւոյ առաքելութիւնը մեր ազգի զաւակներուն մէջ, որոնց համերաշխ ու եղբայրական ոգիի զործակցութեան շնորհիւ է որ Հայց. Առաքելական Մայր Եկեղեցին պիտի կրնայ լաւագոյնս կատարել իր առաքելութիւնը, հաւատարիմ մնալով Լուսաւորչահաստատ Մայր Եկեղեցւոյ առաքելական Հաւատքին ու Սուրբ Սկզբունքներուն:


Թիւի բազմապատկութեամբ երբ աւելի եւս կ'ընդարձակուի Թորանթոյի Հայ Գաղութը, կազմակերպչական նոր ոգի և նոր մթնոլորտ շնչելով, ընկան հետաքրքրութիւնով հետզհետէ իրենց ներկայութիւնը զգալի պիտի դարձնէին նաև շրջակայ քաղաքներէն այցելութեան եկող հայորդիներ, իրենց տարիներու հոգեկան յագեցումը գտնելով Թորանթոյի Հայց. Առաքելական Մայր Եկեղեցւոյ կամարներուն տակ, ինչպէս նաև Նորակառոյց Սրահի Մշակութային և Ընկերային ձեռնարկներուն մէջ: Թելադրելի է որ այսպիսի պարագաներուն շրջակայ քաղաքներէն եկող հայորդիներուն հանդէպ յատուկ հոգածութիւն տրուէր, քաջալերելով զիրենք, որոնք երբեմն այնքան հեռու քաղաքներէն գալու ջանքը չեն խնայեր:

Անուանական գաղափար մը տուած ըլլալու համար վերջին երկու տարիներու ընթացքին միշտ փոփոխութեան ենթարկուող Եկեղեցւոյս հասցէներու ցանկին մասին, կրնանք ըսել որ այսօր Եկեղեցւոյս հասցէներու ընդհանուր գումարը եղած է 321, որոնց 178-ը կը պատկանին Թորանթոյի տեղացի հայերուն, իսկ 75-ը՝ վերջին երկու տարիներու ընթացքին Թորանթօ հաստատուող հայերուն, և 68-ը Թորանթոյէն դուրս գտնուող հայերուն:

Այցելութիւններ.—'Ո վերայ գտանց այցելութիւն արարից': Զաքար. Ժ. 3: Տարուան ընթացքին հետեւեալ տեսակի այցելութիւններ տուած ենք, Հիւանդներու, հիւանդանոց կամ տունը, ցաւակցական, վարչական կամ կրթական գործերով, Տնօրինէքի, օտար եկեղեցիներու հոգեւոր պաշտօնակիցներու, Բարի գալուստի, Ողջերթի, Մկրտութեանց և Պսակադրութեանց և այլ զանազան ընկերային հաւաքոյթներու առիթներով:

Գրասեղանի աշխատանք.—'Պատմեցէք մեզ զգրեալսդ': Ա. Եզրաս Գ. 17: Ընտանեկան արձանագրութեանց տոմարը զոր սկսանք պատրաստել երկու տարի առաջ, այժմ կը պարու նակէ 136 ընտանիքներու առանձին արձանագրութիւններ, սկսած ենք պատրաստել նաև ընտանեկան արձանագրութեանց տոմարը հետեւեալ շրջակայ քաղաքներուն համար, Օզվիլ, Համիլթըն, Քիչընըր, ինչպէս նաև Օթթավա: Մէկ կամ երկու տարիէն պէտք է ամբողջանայ այս աշխատանքը, որուն արդիւնքով ճշգրիտ մարդահամար մը ընել կարելի պիտի ըլլայ ոչ միայն մեր ծուխին այլև շրջակայ քաղաքներուն մէջ: Եկեղեցւոյ ԼԲԱՏՈՒ նամակներուն, Առաջնորդարանի և այլ Եկեղեցիներու հետ հայերէն թղթակցութեանց խմբագրումը եղած է Հովիւին գործերէն մին:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՑ
ԲՕՐՕՆԲՕ, ՕՆԲ.
ԳԱՆԱՏԱ



PARISH COUNCIL OF
HOLY TRINITY ARMENIAN CHURCH
MAILING ADDRESS
EXECUTIVE OFFICE 103 YONGE STREET
TORONTO, ONT., CANADA

4

Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Ave., West, Toronto, Ont., Canada
Mailing Address: 103 Yonge St., Toronto 1, Ont.

Կանոնաւոր արձանագրութիւն պահած ենք Մկրտութեանց, Պսակադրութեանց և Յուդարկաւորութեանց, մասնաւոր տոմարի մը մէջ, ջանացած ենք Վկայագիրները յանձնել ճիշդ իրենց օրին: Մասնաւոր բարի վարուց Վկայագիրներ տուած ենք անհատ հայ ազգայիններու, անոնց Գանատական հատակութեան Վկայականը ստանալնուն առթիւ: Ջանացած ենք մեր անձնական հեղինակութեամբ երաշխաւորութիւն տալ տեղական Գաղթային Գրասենեակին ինչպէս նաև օտար Դեսպանատուններուն առջեւ, մեզի դիմող Հայ ազգայիններու խնդրանքին ընդառաջելով: Մեր անձնական ծախքով հրատարակած ենք նաև Պարտաւորութիւնը Եկեղեցւոյ մէջ Անգլիերէն փոքրիկ պրակը, հաւատացեալներու գործածութեան համար:


Թեմական Պատգամաւորական Ժողով.— 'Ունկնդիր լերուք Առաջնորդաց 2երոց'...: Եբր. ԺԳ. 17: Մայիսի սկիզբը Թրոյ նիւ Եորքի մէջ գումարուած տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովին մասնակցեցայ ծուխիս Պատգամաւորի անձնափոխանորդ Տիար Գամէր Պասամեանի հետ: Ժողովին Ատենապետ ընտրուեցաւ Տ. Լեւոն Բնյ. Առաքելեան, իսկ Փոխ-Ատենադպիր ընտրուեցաւ նուաստս: Ժողովի նախօրեակին գումարուած Հոգեւորականաց տարեկան ժողովին ձեռնարկը Ատենադպիր ընտրուեցաւ, ժողովական աշխատանքներուն:

Ժողով-Նորհրդակցութիւն.— 'Որ ինչ միանգամ պակաս իցէ՛ ուղղեսցես': Տիտոս Ա. 5: Անդամական ժողովներէ դուրս Վարչական կարգ մը ժողովներու ներկայ ըլլալ անհրաժեշտ համարած եմ, ի հարկին թելադրութիւններ եւս ընելով:

Թելադրութիւններ.— Ծուխիս Կրօնական, Եկեղեցական և Ազգային-Մշակոյթային կեանքի յառաջդիմութեան տեսակէտէն անհրաժեշտ կը համարինք հետապնդու մը այս տարեշրջանին՝ հետեւեալ կէտերուն.—

- ա.— Տարեկան Տուրքի փլէժի դրութեան որդեգրում:
- բ.— Աւելի յաճախակի կապ հաստատելու համար ժողովուրդին հետ, զայն տեղեակ պահելու ընթացիկ ձեռնարկներու մասին, և ազգային ու Կրօնաբարոյցական նիւթերու շուրջ Գրականութիւն մատուցանելու համար՝ պարբերաբար դրկուած լրատու նամակներուն տեղ, խնամեալ և ծրագրեալ Երկշաբաթաթերթի մը հրատարակութիւնը, որը ըլլայ պաշտօնական հրատարակութիւնը Թորանթոյի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ:
- գ.— Մեր ծուխի յառաջդիմութեան համար Եաբաթօրեայ Հայկական Վարժարանի մը հաստատումը առաւօտեան ժամը 9.00էն կ.ե. ժամը 4.00, ներառեալ նաև կեսօրուան ճաշը, խնամեալ դպրոցական ծրագրով որուն մէջ տեղ գտնեն Բարոյախօսութիւն, Կրօն, Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն, Հայոց Պատմութիւն, Հայերէն Լեզու, Երգ, Հայաստանի աշխարհագրութիւն, կարող և մանկավարժ Ուսուցիչներու առաջնորդութեամբ, ի հարկին դրամական վարձատրութիւն ընելով Ուսուցչական կազմի անդամներուն: Այս կերպով Հայ Դպրոցը ընելով երկրորդ կարեւորագոյն վայրը Հայ Եկեղեցիէն ետք, ուր հետզհետէ պիտի պատրաստուին Թորանթոյի Հայց. Եկեղեցւոյ Եկեղեցական և Աշխարհական առաջնորդները և ընդհանրապէս Հայ հաւատացեալ ժողովուրդը:
- դ.— Ծուխիս Մշակոյթային ձեռնարկներուն բաւարարութիւն տալու համար, ծուխիս այլ և այլ կազմակերպութիւններէն կազմել Մշակոյթային Յանձնախումբ մը, ըստ ծրագրի և ըստ Ազգային-Եկեղեցական ուղղութեան, Մշակոյթային ձեռնարկներով միշտ արծարծուած պահելու հայուն ազգային հաւաքականութիւնը:

ՀՈԳԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԹՕՐՕՆԹՕ, ՕՆՏ.
ԳԱՆԱՏԱ



PARISH COUNCIL OF
HOLY TRINITY ARMENIAN CHURCH
MAILING ADDRESS
EXECUTIVE OFFICE 103 YONGE STREET
TORONTO, ONT., CANADA

Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Ave., West, Toronto, Ont., Canada
Mailing Address: 103 Yonge St , Toronto 1, Ont.

5

Ի վերջ բանիս իմ սրտագին շնորհակալութիւններս կը յայտնեմ Ս. Եկեղեցւոյս
բոլոր մարմիններուն և ծխականներուն, որոնք զործակցեցան մեզի մեր կրօնական
և հոգեւոր պարտականութեանց մէջ, և կ'աղօթեմ որ ամէնաբարին Աստուած առողջու-
թիւն, արեւշատութիւն և երջանկութիւն պարգեւէ բոլորին, և Եկեղեցւոյս ու անոր
մարմիններուն պարգեւէ յարատեւ յառաջդիմութիւն, և բոլոր ծրագիրներուն կատարեալ
յաջողութիւն:

Կարո Աբր. Մաշեան
Կիրայր Աբեղա Մաշեան
Հոգեւոր Հովիւ
Թորանթոյի Ս. Երիզնդութիւն Եկեղեցւոյ

Մարտ 1, 1964
Թորանթօ, Գանատա: